

ՈՉ ՍՏԱՆԴԱՐՏ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

ԱՊՊԱ ընդհանուր պայմանների համաձայն՝ անկախ ավտովթարի հետևանքով տուժողին պատճառված անձնական և գույքային վնասի չափից՝ հատուցման չափը չի կարող գերազանցել ԱՊՊԱ պայմանագրում նշված ապահովագրական գումարը: Ապահովագրական գումարն ԱՊՊԱ պատահարի դեպքում ապահովագրական ընկերության կողմից տուժողին վճարման ենթակա ապահովագրական հատուցման առավելագույն չափն է, որը կազմում է.

- **Անձնական վնասների դեպքում՝**
 - ✓ Մեկ ապահովագրական պատահարի համար՝ 33,000,000 ՀՀԴ
 - ✓ Յուրաքանչյուր տուժողի համար՝ 3,300,000 ՀՀԴ
- **Գույքային վնասների դեպքում՝**
 - ✓ Մեկ ապահովագրական պատահարի համար՝ 18,000,000 ՀՀԴ
 - ✓ Յուրաքանչյուր տուժողի համար՝ 1,800,000 ՀՀԴ

Ընդ որում, եթե վնասներ կրել են մեկից ավելի անձինք, և այդ վնասների ընդհանուր գումարը գերազանցում է ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի սահմանված ապահովագրական գումարը, ապա նրանցից յուրաքանչյուրին ապահովագրական հատուցումները վճարվում են վնասների ընդհանուր գումարում նրանց պատճառված վնասների չափերին համամասնորեն՝ ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի գծով սահմանված ապահովագրական գումարի սահմաններում: Այն դեպքում, երբ տուժողներից մեկի (կամ մի քանիսի) համար համամասնորեն հաշվարկված գումարը (գումարներից յուրաքանչյուրը) գերազանցում է ըստ յուրաքանչյուր տուժողի սահմանված ապահովագրական գումարը, ապա գերազանցող մասով (մասերով) հատուցվում են մյուս տուժողներին պատճառված վնասները այդ վնասներին համամասնորեն՝ ըստ յուրաքանչյուր տուժողի սահմանված ապահովագրական գումարի սահմաններում:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՇՎԱՐԿԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

ՕՐԻՆԱԿ 1

Տեղի է ունեցել ԱՊՊԱ պատահար, որի հետևանքով հատուցման ենթակա անձնական վնասներ են կրել 4 անձինք՝ հետևյալ չափով.

- 1-ին տուժող՝ 3,300,000 ՀՀԴ
- 2-րդ տուժող՝ 25,700,000 ՀՀԴ
- 3-րդ տուժող՝ 25,700,000 ՀՀԴ
- 4-րդ տուժող՝ 3,300,000 ՀՀԴ

Հատուցման ենթակա գումարի հաշվարկ.

Ավտովթարի հետևանքով պատճառված ընդհանուր վնասը կազմում է 58,000,000 ՀՀԴ: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ անձնական վնասների առավելագույն գումարը յուրաքանչյուր պատահարի համար սահմանված է 33,000,000 ՀՀԴ, յուրաքանչյուր տուժողին

վճարման ենթակա ապահովագրական հատուցման չափը հաշվարկվելու է՝ հիմք ընդունելով նշված սահմանաչափը և իրականացվելու է հետևյալ տրամաբանությամբ.

ա/ անհրաժեշտ է հաշվարկել յուրաքանչյուր տուժողին պատճառված վնասի չափի տեսակարար կշիռը վնասի ընդհանուր գումարի մեջ.

- 1-ին տուժող՝ տեսակարար կշիռը 6% է $(3,300,000/58,000,000 * 100\%)$
- 2-րդ տուժող՝ տեսակարար կշիռը 44% է $(25,700,000/58,000,000 * 100\%)$
- 3-րդ տուժող՝ տեսակարար կշիռը 44% է $(25,700,000/58,000,000 * 100\%)$
- 4-րդ տուժող՝ տեսակարար կշիռը 6% է $(3,300,000/58,000,000 * 100\%)$

բ/ այնուհետև հաշվարկվում է յուրաքանչյուր տուժողին վճարվող ապահովագրական հատուցման չափը.

- 1-ին տուժող՝ 1,980,000 ՀՀԴ $(33,000,000 * 6\%)$
- 2-րդ տուժող՝ 14,520,000 ՀՀԴ $(33,000,000 * 44\%)$
- 3-րդ տուժող՝ 14,520,000 ՀՀԴ $(33,000,000 * 44\%)$
- 4-րդ տուժող՝ 1,980,000 ՀՀԴ $(33,000,000 * 6\%)$

Այս դեպքում 2-րդ և 3-րդ տուժողներին վճարվող ապահովագրական հատուցման գումարը գերազանցում է առավելագույն սահմանված 3,300,000 ՀՀԴ-ը՝ 11,220,000 –ական ՀՀԴ-ի չափով, ուստի 2-րդ և 3-րդ տուժողներից յուրաքանչյուրին կվճարվի առավելագույնը՝ 3,300,000 ՀՀԴ գումար:

Բացի այդ 1-ին և 4-րդ տուժողներին վճարվելիք հատուցման չափն ավելի քիչ է, քան առավելագույն հատուցման ենթակա գումարը, ուստի հաշվի առնելով նաև այն, որ 1-ին և 4-րդ տուժողների տեսակարար կշիռն ընդհանուր վնասի մեջ հավասար է, ապա վերջիններիս վճարման ենթակա հատուցման չափը կկազմի 13,200,000 ՀՀԴ $(1,980,000+11,220,000)$, որը գերազանցում է անձնական վնասների համար յուրաքանչյուր տուժողին հատկացվող ապահովագրական գումարի առավելագույն չափը՝ 3,300,000 ՀՀԴ-ն, ուստի 1-ին և 4-րդ տուժողներին վճարվող հատուցման չափը ևս կկազմի 3,300,000 ՀՀԴ:

ՕՐԻՆԱԿ 2

Տեղի է ունեցել ԱՊՊԱ պատահար, որի հետևանքով վնասվել է 11 մեքենա՝ ներառյալ մեղավոր վարորդի մեքենան: Մեղավորություն չունեցող վարորդների մեքենաներից յուրաքանչյուրի վնասը 3,000,000 ՀՀԴ է, ընդհանուր վնասը՝ 30,000,000 ՀՀԴ:

Հատուցման գումարի հաշվարկ.

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ գույքային վնասների դեպքում ապահովագրական հատուցման առավելագույն գումարը 18,000,000 ՀՀԴ է, ինչպես նաև այն որ նշված դեպքում տուժած մեքենանաներն ունեն վնասի չափի նույն՝ 10% համամասնությունը, ուստի յուրաքանչյուր վարորդ կստանա 18,000,000 ՀՀԴ-ի 10%-ի չափով հատուցում, այսինքն 1,800,000 ՀՀԴ գումար: